<<Պատանի հայագետ>> խմբակի

Ծրագիր /տարեկան՝ 68 ժամ/

Շաբաթական 2 ժամ

2023-2024 ուս.տարի

Երևան քաղաքի Վ. Թեքեյանի անվան հ. 92 հիմն. դպրոցի
Պատմության ուսուցչուհի՝ Շ. Քոչարյան

Հայրենագիտություն խմբակի գործունեության նպատակն է.

- ✓ Սովորողներին հայրենաճանաչ դարձնելը, ձևավորել խորը հետաքրքրություն մեր բնաշխարհի, պատմական անցյալի ու ներկայի հանդեպ
- ✓ Մոտիկից ծանոթանալ Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքին, նշանավոր արքայատոհմերին, մեր մշակույթին, հայ ժողովրդի մղած հերոսական պայքարին, որը շարունակվում է մեր օրերում
- ✓ Ձևավորել որոնողական աշխատանքներ կատարելու, հետևություններ անելու հմտություններ
- ✓ Ճանաչողական էքսկուրսիաների միջոցով նպաստել սովորողների ճանաչողական շրջանակների ընդարձակմանը
- ✓ Ձևավորել և ամրապնդել խմբային աշխատանքի միջոցով աշակերտների համագործակցությունը
- ✓ Խմբակի գործունեությունը իր ազդեցությունը կունենա հայրենասեր քաղաքացու ձևավորման ու զարգացման վրա
- ✓ Կնպաստի հայ մշակույթի հանդեպ հարգալից վերաբերմունքի դրսևորմանը, ազգային ինքնագիտակցության բարձրացմանը

Տարեվերջին սովորողները կիմանան

- ✓ Հայկական լեռնաշխարհի, ՀՀ-ի, իր բնակավայրի աշխարհագրական դիրքի, պատմական անցյալի ու ներկայի մասին
- ✓ Հայ նշանավոր արքայատոհմերի , արքաների գործունեության մասին
- ✓ Հայկական մշակույթի բնագավառների մասին(պատմագրություն, գիտություն, գրականություն, պարարվեստ, երգարվեստ)
- ✓ Հեթանոսական կրոնի քրիստոնեության ընդունման ու դրա պատմական նշանակության մասին
- ✓ Ճանաչողական էքսկուրսիաների միջոցով կծանոթանան պամաճարտարապետական նշանավոր կոթողներին(Կարմիր բլուր, Գառնիի հեթանոսական տաճար, Էջմիածնի մայր տաճար, Հովհաննավանք, Ս. Գևորգ)
- ✓ Հայկական քաղաքակրթության յուրահատկությունների ու ստեղծած արժեքների մասին

Ակնկալվող վերջնարդյունքները.
Սովորողները կկարողանան

- ✓ Վեր հանել Հայկական լեռնաշխարհի, իրենց բնակավայրի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, պատմական նշանավոր իրադարձությունները
- ✓ Արժևորել հայ արքաների գործունեությունը
- ✓ Առանձնացնել հեթանոսական կրոնի բնորոշ գծերը
- ✓ Վեր հանել քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը
- ✓ Ճանաչողական էքսկուրսիաների միջոցով հավաքած տեղեկությունները ի մի բերել, ցուցապաստառներ, տեսասահիկներ պատրաստել
- ✓ Արժևորել հայրենասեր քաղաքացու դերը հայապահպանության գործում
- ✓ Արժևորել հայկական քաղաքակրթության յուրահատկությունները և ստեղծված արժեքները

<<Պատանի հայագետ>> խմբակ

Տարեկան՝ 68 ժամ

Շաբաթական 2 ժամ

Ժամ	Թեմա
	Թեմա 1 Հայոց 8 հրաշալիքները : 3 ժամ
1 -3	Սարերի մեջ՝ Մասիսը , գետերի մեջ՝ Արածանին , քաղաքների մեջ՝ Երվանդաշատը , տաճարների մեջ՝ Զվարթնոցը , ձկների մեջ՝ Իշխանը , ներկերի մեջ՝ Որդան կարմիը , հացահատրկի մեջ՝ Քռիկը , մրգերի մեջ՝ Ծիրանը :
	Թեմա 1 Հայոց զարմանահրաշ բնաշխահրը: 7 ժամ
4	Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը և սահմանները :
5	Մասիսը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթ , Նոյան տապանի հանգրվան :
6	Քառագագաթ Արագած :Կապուտջուղ լեռը ՀՀ երկրորդ բարձր լեռնագագաթ :
7	Հայոց մայր գետը :
8	Հայկական լեռնաշխարհի հանքային ջրերը և տաք գեյզերները :
9	Հայկական լեռնաշխարհին յուրահատուկ բուսական ու կենդանական աշխարհը :
10	Ճանաչողական էքսկուրսիա դեպի Կարմիր բլուր , Էրեբունի թանգարան:
	Թեմա 3 Հայոց ծագումնաբանությունը : 2 ժամ
11	Հնդևրոպական նախահայրենիքը :
12	Ավանդազրույցներ հայ ժողովրդի ծագման մասին :
	Թեմա 4 Մեծ աշխարհի մեր փոքր անկյունը : 3 ժամ
13	Որտեղից է սկսվում հայրենիքը :
14	Հավաքել նյութեր , պատրաստել տեսասահիկ նվիրված Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձաններին:
15	Էրեբունի ամրոցը հազարամյակներ առաջ:
	Թեմա 5 Մեր լեզուն մեր խոսքը : 6 ժամ
16	Հնդևրոպական լեզվաընտանիքը և հայերենը :
17	Ինչ է մեհենագիրը :
18	Նախամաշտոցյան գրեր :Հայ գրերի գյուտը և նրա նշանակությունը :
19	Ճանաչողական էքսկուրսիա Օշական , Մաշտոցի դամբարան,Հովանանավանք,Ս. Գևորգ :
20	Վիկտոր Համբարձումյանը և Ջորջ Բայրոնը հայոց լեզվի մասին :
21	Գրական լեզուն և մեր գյուղի բարբառը :
	Թեմա 6 Մեր կրոնը մեր հավատքը: 5 ժամ
22	Հայ հեթանոսական հավատքը ;
23	Նեմրութ լեռան սրբավայրը :
24	Քրիստոնեության ընդունումը , պատմական նշանակությունը :

25	Հայոց 122 –րդ կաթողիկոս՝ Ներսես Աշտարակեցի :
26	Ճանաչողական էքսկուրսիա Աշտարակ քաղաք ,Աշտարակեցու ծննդավայր :
	Թեմա 7 Հայ նշանավոր արքաները : 7 ժամ
27	Մենուա և Արգիշտի ; Մենուայի ջրանցքը և Էրեբունի բերդ ամրոցը :
28	Պարույր Սկայորդին և Նինվեի գրավումը :
29	Տիգրան Երվանդյան և Աժդահակի սպանությունը:
30	Արտաշես առաջին և Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը ;
31	Տիգրան մեծ և Տիգրանակերտ :Ացախի Տգրանակերտը :
32	Տրդատ Մեծ և Խոսրով Կոտակ :
33	Աշոտ Ողորմած և Անիի հիմնադրումը :
	Թեմա 8 Հայոց պետականության վերածնունդը : 8 ժամ
34-35	Պետականության ստեղծումը և Արամ Մանուկյանի դերը այդ գործում :
36	Գործնական աշխատանք՝ տեսասահիկի պատրաստում , նվիրված Արամ Մանուկյանին :
37	Գարեգին Նժդեհ :
38	Նժդեհյան պատգամներ :
39	Գ. Նժդեհի դերը Զանգեզուրի գոյապահպանության գործում :
40	Էքսկուրսիա Գ. Նժդեհի հուշահամալիր :
41	Գործնական աշխատանք՝ ցուցատախտակի պատրաստում , նվիրված Գ. Նժդեհին :
	Թեմա 9 Հայրենական պատերազմը և հայերը; 3 ժամ
42	Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին :
43	Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին : Կրկնակի հերոսների սխրանքը :
44	Արցախցիները Հայրենական պատերազմում :
	Թեմա 10 Անկախ Հայաստան ; 2 ժամ
45	Անկախության հռչակագրի ընդունումը Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից :
46	Հայաստանի Անկախության հանրաքվեն և պետության կառուցումը :
	Թեմա 11 Արցախ աշխարհ 4 ժամ
47	Արցախի բնաշխարհը :
48	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը :
49	Արցախյան ազատամարտը :
50	Արցախի պատմամշակութային կոթողները : Գանձասար :
	Թեմա 12 Մեր մշակույթը ; 14 ժամ
51	Լուսավորչական նշանավոր կենտրոնները : Հաղպատ , Սանահին , Գլաձոր , Տաթևի վանք , Գոշավանք ;
52	Ոսկեդարյան հայ մշակույթը ;
53-55	Հայ պատմիչները՝ Մ. Խորենացի , Ագաթանգեղոս , Կորյուն , Եղիշե , Մ.Կաղականտվացի ; Առասպելները ; Սասնա Ծռեր էպոսը ;
56	Միջնադարյան գիտության անխոնջ մշակները՝ Ա. Շիրակացի , Դավիթ Անհաղթ , Մխիթար Գոշ , Մխիթար Հերացի , Ամիրդովլաթ Ամասիացի ;

57	Գրականությունը ՝ Գրիգոր Նարեկացի , Ֆրիկ , Սայաթ Նովա , Հ. Թումանյան , Ե. Չարենց , Պ. Սևակ ;
58	Հայ երաժշտական արվեստը ։ Հայկական նոտաները ՝ խազերը և դրանց վերծանումը Համբարձում Լիմոնջյանի կողմից ։ Կոմիտաս ։
59	Խաչքարային արվեստ ։ Ջուղայի և Նորադուզի խաչքարերը ։ Խաչքարագործ վարպետներ ՝Մոմիկ և Պողոս ։
60	Անզուգական հայկական ճարտարապետությունը ։ Ճանաչողական էքսկուրսիա Մայր տաճար։
61	Հայ պարարվեստը ։ Ազգագրական պարեր ։
62	Ինչ է տարազը ։ Հայկական տարազի բազմազանությունը ։ Արարատյան տարազը ;
63- 64	Գորգագործական արվեստը ։ Հայկական գորգերը ։ Աշխարհահռչակ վիշապագորգերը ։ Պատրաստել տեսասահիկներ նվիրված հայկական մշակույթին ;
	Թեմա 14 Հայոց մայրաքաղաքները ։ 2 ժամ
65 - 66	Արմավիր , Վան , Հայկական Կարթագեն ՝ Արտաշատ , Տիգրանակերտ , Երվանդաշատ , Վաղարշապատ , Դվին , Բագարան , Երազգավորս , Կարս , Անի , Երևան։
	Թեմա 15 Նշանավոր զորահրամանատարները 1 ժամ
67	Վարդան Մամիկոնյան , Անդրանիկ Օզանյան , Հովհ. Բաղրամյան , Հ. Բաբաջանյան , Ա. Խամփերյանց , Իսակով ։
68	Աշխատանքների ամփոփում ։